

Որակի հոչակագիր Վիճակագրական բիզնես ռեգիստր

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Վիճակագրական բիզնես ռեգիստր
0.2	Ոլորտը	Վիճակագրական բիզնես ռեգիստր
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին Բաժնի պետ Վարդան Արևշատյան Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0010, Հանրապետության պողոտա, Կառավարական 3 շենք Հեռախոս՝ +374 11 580 372, Էլ. փոստ՝ <a href="mailto:business_reg@armstat.am">business_reg@armstat.am</a> ; <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Վիճակագրական բիզնես ռեգիստրը (այսուհետ՝ ՎԲՌ) վիճակագրական տեղեկատվական ռեգիստր է, որը վարվում է վիճակագրական դիտարկումների անցկացման, դրանց ընտրանքի կառուցման աշխատանքների կազմակերպման, համակարգման և իրականացման, ինչպես նաև վիճակագրական ամփոփ տեղեկատվության (այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրության, բիզնես դեմոգրաֆիայի և այլնի) նախապատրաստման նպատակներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	ՎԲՌ-ի վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողները Արմստատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են (այդ թվում՝ մարզային/Երևան քաղաքի վարչությունները): ՎԲՌ-ի արդիականացված շտեմարանի տվյալները կիրառվում են Արմստատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան վիճակագրական ընտրանքների կազմակերպման, ոլորտային վիճակագրական շտեմարանների տվյալների ստուգաճշտման ու արդիականացման, ինչպես նաև ըստ տարբեր խմբավորումների վիճակագրական ամփոփ տեղեկատվության (Միավորների քանակ, շրջանառություն, ավելացված արժեք, վարձու աշխատողների թվաքանակ, բիզնես-դեմոգրաֆիա և այլն) մշակման ու տարածման նպատակներով:

0.6	Տեղեկությունների աղբյուրները	ՎԲՌ-ի վարման նպատակով օգտագործվում են ուղղակի (վիճակագրական հաշվետվություններով հավաքվող), անուղղակի (Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, Պետական եկամուտների կոմիտեից, վարչական ռեգիստր վարող այլ պետական մարմիններից ստացվող) և այլ (հանրային բաց) աղբյուրներից հասանելի և ստուգաճշտված տեղեկությունները:
-----	------------------------------	---

0.7	<p>Տվյալների հավաքման իրավական լիազորությունը</p>	<p>ՎԲՌ-ի տվյալները հավաքվում/ստացվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, հնգամյա ու տարեկան վիճակագրական ծրագրերի հիման վրա, ինչպես նաև Վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՎՊԽ) կողմից հաստատված 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն, 2021 թվականի մայիսի 5-ի «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին» թիվ 13-Ա, 2018թ.-ի հոկտեմբերի 19-ի «Իրավաբանական անձանց բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վերաբերյալ Ձև թիվ 1-ԲՌ(տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը ու դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշումների հիման վրա:</p> <p>Վարչական ռեգիստրներից համապատասխան տեղեկատվության ստացումը կարգավորվում է 2011 թ. հունիսի 13-ի Արդարադատության նախարարի N 85-Ն և Արմստատի նախագահի N 68-Ն , ինչպես նաև 2014 թ. սեպտեմբերի 4-ի Ֆինանսների նախարարի N124-Ա և 2014 թ. սեպտեմբերի 2-ի Արմստատի նախագահի N575-Ա համատեղ հրամաններով հաստատված դրույթներով:</p> <p>ՎԲՌ-ում կիրառվում են Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությունը, «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչը», «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը», ԱՊՀ վիճակագրական կոմիտեի կողմից մշակված «Աշխարհի երկրների դասակարգիչը», ինչպես նաև ՄԱԿ-ի «Ազգային հաշիվների համակարգ-2008» և «Վիճակագրական բիզնես ռեգիստրի ձեռնարկ, 2015» մեթոդաբանական փաստաթղթերով առաջարկվող հիմնադրույթները:</p>
-----	---	--

0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է տարեկան պարբերականությամբ՝ առաջնորդվելով Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 9-րդ՝ «Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն» սկզբունքի պահանջներով (տես՝ <a href="http://armstat.am/file/doc/99489448.pdf">http://armstat.am/file/doc/99489448.pdf</a> հղումը), Եվրամիության «Աջակցություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի» շրջանակում՝ հաշվետու և նախորդ/բազիսային ժամանակաշրջանների վիճակագրական հաշվետվությունների, դրանցում ընդգրկված հարցերի (ցուցանիշների) քանակի, հաշվետվությունների ներկայացման պարբերականության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության համեմատման արդյունքում:
-----	---	--

1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	ՎԲՌ-ն Հայաստանի Հանրապետությունում գրանցված/հաշվառված և տնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու նոտարների (այսուհետ՝ Միավորներ) իրական գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, վարձու աշխատողների թվաքանակի և սույն հոչակագրի 5.2 կետում նշված ցուցանիշների վերաբերյալ մշտապես արդիականացվող տվյալների շտեմարան է:

<p>1.2</p>	<p>Վիճակագրական հասկացություններ</p>	<p>Գործող Միավորները՝ հաշվետու տարում տնտեսական գործունեության իրականացման արդյունքում առնվազն դրական շրջանառություն և/կամ վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ ունեցող միավորներն են:</p> <p>ՎԲՌ-ն պարունակում է տնտեսական գործունեություն իրականացնող Միավորների վերաբերյալ անհատական, անվանական, հասցեական արդիականացված տեղեկատվություն:</p> <p>ՎԲՌ-ում ըստ կազմակերպատիրավական ձևերի հիմնականում առկա են բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներ, իրավաբանական անձանց միություններ, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններ, պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնադրամներ, արտադրական կոոպերատիվներ, անհատ ձեռնարկատերեր և այլն:</p> <p>ՎԲՌ-ի տվյալների շտեմարանը ներառում է Միավորների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) նույնականացման ծածկագիրը (ՁԿԴ)՝ առկայության դեպքում.</li> <li>2) հարկ վճարողի հաշվառման համարը (&lt;ՎՀՀ).</li> <li>3) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման/հաշվառման համարը՝ առկայության դեպքում.</li> <li>4) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման/հաշվառման ամսաթիվը՝ առկայության դեպքում.</li> <li>5) լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն ազգանունը).</li> <li>6) կազմակերպատիրավական ձևը.</li> </ol>
------------	--------------------------------------	---

		<p>7) հիմնադիրների/բաժնետերերի վերաբերյալ տեղեկությունները (պետություն, համայնք, քաղաքացի, իրավաբանական անձ, օտարերկրյա՝ պետություն, համայնք, քաղաքացի, իրավաբանական անձ).</p> <p>8) գտնվելու (գրանցման/հաշվառման) վայրի հասցեն, հեռախոսահամարը, փոստային դասիչը, էլեկտրոնային փոստի հասցեն.</p> <p>9) տնտեսական գործունեության իրականացման վայրի հասցեն, հեռախոսահամարը, փոստային դասիչը, էլեկտրոնային փոստի հասցեն.</p> <p>10) տնտեսական գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակները.</p> <p>11) ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի).</p> <p>12) ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակը.</p> <p>13) առանձնացված ստորաբաժանումների, ներկայացուցչությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում) առկայությունը:</p>
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	<p>-Արմատատի ներքին օգտագործման համար՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա օգոստոսի 31-ը,</p> <p>- Միավորների վերաբերյալ քանակական, արդյունքային (այդ թվում՝ շրջանառություն, ավելացված արժեք և այլն), վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ, բիզնես-դեմոգրաֆիա և այլն՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ը:</p>
2.3	Ճշտապահություն	Սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան պարբերականությամբ
<b>3 .Ճշգրտություն</b>		

3.1	Ընդհանուր ճշգրտություն	ՎԲՌ-ում ներառված ցուցանիշների ընդհանուր ճշգրտության ապահովումն իրականացվում է տեղեկատվության տարբեր աղբյուրներից՝ ուղղակի (վիճակագրական հաշվետվություններ) և անուղղակի (վարչական ռեգիստրներ ու հանրային բաց աղբյուրներ), հավաքված/ստացված տեղեկատվության համեմատման, համադրման, վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների հետ համագործակցության և դրանց արդյունքում տրամաբանական, թվաբանական և այլ անճշտությունների վերացմանը միտված մասնագիտական աշխատանքների իրականացման արդյունքում:
3.2	Անճշտության աղբյուրները	ՎԲՌ-ում ներառված ցուցանիշների անճշտությունը կարող է պայմանավորվել՝ - վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից Արմստատին թերի և/կամ ոչ ամբողջական և/կամ ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացմամբ, - վարչական ռեգիստր վարող մարմնի կողմից ներկայացված կամ հանրային բաց աղբյուրներում թերի և/կամ ոչ ամբողջական և/կամ ոչ արժանահավատ տեղեկատվության առկայությամբ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	ՎԲՌ-ի վերաբերյալ փաստացի ներկայացված տեղեկատվության և իրականացված ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ առանձին Միավորների պահպանվում է առանձին էլեկտրոնային շտեմարանում, ինչը հնարավորություն է տալիս ամփոփ ձևով գնահատելու հայտնաբերված անճշտությունների աստիճանը:

#### 4 .Համադրելիություն

4.1	Ժամանակագրական համադրելիություն	Միավորների տնտեսական գործունեության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը մինչև 2002թ.-ը ներառյալ դասակարգվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: Սկսած 2003թ.-ից այդ նպատակով կիրառվել է Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 1-ին խմբագրության վրա մշակված Հայաստանի դասակարգիչը (ՏԳՏԴ խմբ. 1), իսկ 2010թ.-ից՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությունը (ՏԳՏԴ խմբ. 2): Տեղեկատվության համադրելիության ապահովման նպատակով ՎՊԽ կողմից
-----	---------------------------------	--

		հաստատվել է ՏԳՏԴ խմբ.1-ից ՏԳՏԴ խմբ. 2-ին անցման բանալիներ (տես՝ <a href="https://www.armstat.am/file/doc/99522983.pdf">https://www.armstat.am/file/doc/99522983.pdf</a> հղումը):
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Այլ տեղեկատվական աղբյուրներում համանման վիճակագրություն չի վարվում, ինչի պատճառով համադրելիություն առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածություն	Ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված նախնական տվյալները ենթարկվում են ստուգաճշտման և/կամ վերանայվում են այդ աղբյուրների կողմից ներկայացված նոր՝ ճշգրտված տեղեկատվության հիման վրա:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	Տվյալները տարածվում են էլեկտրոնային ձևաչափով՝ վիճակագրական տեղեկագրի միջոցով՝ հայերեն և անգլերեն լեզուներով:
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ուղղակի աղբյուրներից հավաքված սկզբնական վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են թղթային կամ էլեկտրոնային ձևաչափերով՝ կախված դրանց ներկայացման եղանակից: Անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային ձևաչափով: Ուղղակի և անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման, ստուգաճշտման, մուտքագրման ու միավորման արդյունքում ձևավորվում է հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ ՎԲԴ-ի տվյալների արդիականացված շտեմարանը, որը կիրառվում է ինչպես Արմստատի ներքին, այպես էլ արտաքին նպատակներով:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես- գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373:</a>



5.4	Այլ տեղեկատվություն	ՎԲՌ-ի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է 2021 թվականի մայիսի 5-ի «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին» թիվ 13-Ա, 2018թ.-ի հոկտեմբերի 19-ի «Իրավաբանական անձանց բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վերաբերյալ Ձև թիվ 1-ԲՌ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը ու դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշումներով հաստատված հավելվածներում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: